Հաստատված է
Շուշիի տեխնոլոգիական համալսարանի խորհրդի
2018թ. օգոստոսի 31-ի N1-08/18/8 որոշումով:
Փոփոխությունը կատարվել է գիտական խորհրդի
2025 թ.-ի փետրվարի 26-ի N1-02/25/1 որոշմամբ:

Գիտական խորհրդի նախագահ՝
Ն.Ա.Միքայելյան

ԿԱՆՈՆ
ՇՈՒՇԻԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՈՒԴԻՏԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ԵՎ ԱՈՒԴԻՏԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ

1.Շուշիի տեխնոլոգիական համալսարան հիմնադրամի կողմից անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության կարգը և ներկայացվող չափանիշները

«Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ) յուրաքանչյուր տարի պատվիրում է ֆինանսական աուդիտի իրականացում իր ֆինանսատնտեսական գործունեության թափանցիկությունը ապահովելու, ֆինանսական գործունության արդյունքում առաջացած ֆինանսական արդյունքների արժանահավատությունը հաստատելու համար:

Անկախ աուդիտորն ընտրվում է մրցութային կարգով և հաստատվում հոգաբարձուների խորհրդի կողմից: Տարեկան ֆինանսական գործունեության աուդիտն իրականացնող կազմակերպությունն ընտրվում է մինչև հաշվետու տարվան հաջորդող փետրվարի 15-ը:

Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամների մեկ երրորդի պահանջով կարող է կատարվել արտահերթ աուդիտ:

Հիմնադրամն ընտրում է այն աուդիտորական կազմակերպությունը, որը բավարարում է հետևյալ նվազագույն չափանիշներին.

• Աուդիտորական կազմակերպությունը պետք է ունենա առնվազն 3 տարվա փորձ տվյալ ոլորտում,

• Աուդիտորական կազմակերպության աշխատակիցները որպես աուդիտոր, պետք ի ունենան առնվազն 2 տարվա աշխատանքային փորձ: Ցանկալի է, որ աուդիտորական խմբում ներգրավված աշխատակիցները ունենան աուդիտորական միջազգային որակավորման գծով որոշակի մակարդակ (օրինակ՝ կ-Սի-Սի-կ, ՍԻ-Փի-կ, Սի-Այ-էս-կ),

• Միևնույն աուդիտորական կազմակերպությունը չի կարող 5 տարի անընդմեջ իրականացնել Հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտը:

2.Աուդիտի արդյունքների ամփոփումը

Տարեկան ֆինանսական գործունեության աուդիտի արդյունքները քննարկվում են Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստում յուրաքանչյուր տարի՝ հաշվետու տարվան հաջորդող ապրիլի 25-ից ոչ ուշ: Աուդիտի արդյունքներով ներկայացված եզրակացությունը հրապարակվում է:

Արտահերթ աուդիտի արդյունքները քննարկվում են հոգաբարձուների խորհրդի նիստում աուդիտի ավարտից սկսած երկամսյա ժամկետում:

Գիտական խորհրդի նախագահ՝ Ն.Ա.Միքայելյան

Գիտական քարտուղար՝ Լ.Գ.Այդինյան